


ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՄԵԾ ԲԱՆԱՏԵՂՆԻ ՀՈԳՈՒ ԱՂՈԹՔՆԵՐԸ

Հայրեմի առաջին աղոթքը, որ մեզ ուսուցանել են մեր պապերը, «Հայր մերն» էր, առաջին բանատեղծությունը՝ աղոթքի կախարդանքով թովիչ ու հմայուն, մեր մեծերից լսած ու սովորած «Ես իմ ամուշ Հայաստամին»: Ի դեպ, այս անգույքական ստեղծագործությունը, որի հեղինակի ով լինելը դեռ մենք չգիտեինք, նաև երգում էին համեմատությունների, իրենք իրնեց հետ լինելու պահերին՝ տիկրության, կարուի կամ հապատության զգացումները արտահայտելիս: Երգում էին կրօսու ու հուզումնալի, և մեր պատամեկան հոգու մեջ ճախրում էին կախարդական այդ երգի բառերըն ու մեղեդին: Այդ բանատեղծության անանց հմայքն ու տպավորությունը դեռ մամկությունից մեր մեջ մնաց մեր խաչքարերի երկաթագիր քանդակների նման: Հետոազյում, արդեն գաղտնի, երբ կարդում կամ արտասանում էինք, մեզ թվում էր՝ այդ երգի տողերը վառվում են կարմիր-կապույտ բոցերով, և տողերի հուրը ասես այրում էր մեր դեմքը: Թվում էր, թե հեղինակը բառերը համել էր սրտի բուրայից ու տեղադրել տողերի մեջ՝ այնքան ներդաշնակ ու աստվածորեն, որ նրանց բոցերն շրջունը կարծեն դատնում էր լսելի: Այս բանատեղծությունը թվում էր, թե Աստված ինքն էր թելադրել գրողին:

Հասում տարիներին կարդացինք շատ և շատ բանատեղծական ժողովածուներ, սակայն այն մնաց բոլորից բարձրն ու ամերկնելին: Հպարտություն ներշնչող այս ստեղծագործության մասին խոսել են շատերը՝ Ավետիք Խահիկյանը, Ստեփան Զորյանը և այլք: Մարտիրոս Սարյանը գիտ է. «.... Դա մեր այսօրվա աղոթքն է: Աղոթք, որ կարելի է թե՛ մտքում հյուսել, թե՛ միմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաձայն: Քիչ կլինի ասել, թե բանատեղծություն է... Դա անմիշելի ժամանակներից եկող Հայաստան-Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ դիմանկարն է: Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլումն է, մեր կրօս տառապամբների ու փայփայած իդեալների, մեր անկումների ու վերելքների, արհավիրքների ենթակա մեր ճակատագրի անմեռ մնալու ձգտման գեղարվեստա-

կան բյուրեղացումն է: Այդպիսի մի երգ աշխարհ բերելու համար պետք է ամենա-
քիչը կիսաստված լինել:

Հանձարի բռնկումներով Չարենցի յուրաքանչյուր ստեղծագործություն զար-
մանք է հարուցում, զարմանք ու հպարտություն. չՀ՞ որ նրա փառաբներ ու անման
ստեղծագործությունները մերոպատառ լեզվի մեռունարուվորվ են օծված, նրան-
ցում արտահայտված են մեր լեզվի ամբողջ հմայքն ու
հարստությունը, մեր հավատքի Լուսավորչավանդ
մշտավառ կանթեղի խնկարույրը:

Տարեցտարի, բարեբախտաբար, Չարենցի ստեղ-
ծագործություններին հաճախանորեն ու խորությամբ
ծանոթանալու հնարավորությունները ընդարձակվե-
ցին: Լուս աշխարհ և կան Շակարչուի Ռեզինա Ղա-
զարյանի շնորհիվ կորստից փրկված նոր ստեղծագոր-
ծություններ: Տպագրվեցին Գուրգեն Մահարու, Վահ-
րամ Ալազանի, Վահարշակ Նորենցի. Խզաբելլա Չա-
րենցի, պոետի մտերիմ ոռու և այլազդի մտավորական-
ների հուշերն ու կարծիքները: Արյիսիվների լուսական
միջից լուս աշխարհ հանվեցին բանաստեղծի կյանքին ու գրական գործունեությա-
նը վերաբերող բազմաթիվ պյուտեր: Նրա ամենթեռների ստեղծագործությունների
վերծանման, նոր պյուտերի հայտնաբերման աշխատանքները, անշուշտ, դեռ
կշարունակվեն:

Չարենցի ստեղծագործությունների գմահատման, նրա բերած բանաստեղծա-
կան արվեստի նոր ձևերին, ոնին ու թեմաներին, բառապաշտին ու լեզվի հարցս-
տությամբ անդրադարձել են շատերը, սակայն աստվածաշնչան թեմաներին, պո-
ետի իճքն իր հետ ու Աստծո հետ առնչվելու զրոյցներին ու անկեղծ խոստովանու-
թյուններին, հավատապոր նրա հոգու շշունչներին բնականարար խորհրդային տա-
րիներին ոչ ոք չի անդրադարձել: Բանաստեղծի դստեր՝ Արփենիկ Չարենցի 1999 թ.
լուս ընծայած «Եղիշն Չարենցի աղոթքները» գիրքը, որը տպագրվել է հոգությու-
յամբ Մերորա արքեպոս. Աշճյանի և մեկնանասությամբ տեր և տիկին Թաղյանների,
մի փորձ է՝ այդ բացը լրացնելու, բացելու մի աշխարհ, որը մշտապես անտեսվել է,
իսկ իրականում մեծ բանաստեղծն իր համանրեղ գործերը ստեղծելիս մշտապես
զգացել է աստվածային մերժանանքի զորությունը և Աստծո միջամտությունը.



Ծնորհապարտ եմ, Տեր, իմ լիարուո ձո՞նած

Ծնորհների համար և ձիրքերի ամեղծ,

Որ կոչեցիր երգիչ ու բանաստեղծ,

Նվիրեցիր տապիդ ու էվոյյան քնար...

Ծնորհապարտ եմ, Տեր, ես առավել սակայն,

Որ կոչեցիր ինձ ոչ սուկական քերթող ...

Գրքի առաջաբանում հեղինակը գրում է. «Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հոչակելու առթիվ նպատակահարմար եմ համարում ի մի քերել և տպագրության հանձնել Եղիշե Զարենցի ատեղծագործական հանճարի արտահայտություն համդիսացող տարրեր ժամանակներում գրված աղոթքները՝ ցուց տալու, հիշեցնելու, որ Ե. Զարենցը մի պարզ հավատացյալ է եղել, ինչպես իր քրիստոնյա ժողովուրդը, մի ջերմեռանդ աղոթող»:

Գրքի «Աղոթքներ առ գոյատնումն մարդու», «Երեք մահվան տեսիլներ», «Զարենցը Աստծո բերկրանքով լեցուն», «Աղոթքը չմարող կանթեղ», «Զարենցը Աստվածապատումի ճանապարհին», «Աստված՝ սեր», «Զարենցի աղոթքը մահվան հետ հաշտ», «Ես իմ անուշ Հայաստան»-ի և մյուս վերլուծական բաժիններում հեղինակը հանգամանորեն անդրադարձել է բանաստեղծական այն շարքերին, որոնց մեջ պրտահայտվել են իր ժողովրդի փրկության համար աղոթող բանաստեղծի պատգամները: Դիմելով երկնքի ու երկրի Տիրակալին՝ «Քեզ եմ կանչում ես արդ, ինչպես Նարեկացին», Զարենցը շարունակում է.

*Եվ ես - տիւուր, ինչպես վկան նարեկացի՛՝
Եվ զարհուրդու այնպես, և մենակյաց՝
Զարհուրդի կյանքի համեւա անօց կանգնած՝
Ես ո՞ւմ դիմեմ, ո՞վ Տեր, արդ՝ Քեզանից բացի:*

Բարձրյալի լուսավոր շունչը, Արարշական հայացքը բանաստեղծը մշտապես զգացել է իր գլխավերնում և դեռ պատանի գիտակցել, որ առանց Տիրոց կամքի, առանց հավատքի չի ծնվի ծիրքն ու տողն աստվածային: Աստծո առջև նրա խոսությանությունները, անկերծ երկխոսություններն ու զոհաբերությունները ավելի հաճախակի են արտահայտվում հատկապես բանաստեղծի կյանքի դժվարին ու հալածական տարիներին, իր երկրի մշուշու ապագան ու ճակատագիրը անորոշության մեջ տեսնելիս: Իր երկրի ու ժողովրդի հանդեպ տածած անսահման սերը նա արտահայտում է իր անձը Աստծո զոհանեղանին դնելու պատրաստակամությամբ: Այս հարցում նա երկմտանք չունի:

*Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չզան,
Ու թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի
իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան:*

Տիրոց հետ իր բազմանույթ հարցադրումները, զրոյց-մտորումներն ու աղոթքները արտահայտվել են հատկապես «Լերան աղոթք», «Մահվան տեսիլ», «Տաղ անձնական», «Ի խորոց արտի խոսք ընդ Աստված», «Իմ լերան աղոթքը», «Հարդագողի ճամփորդները» և բազմաթիվ այլ գործերում:

«Աստծուն աղոթելով Զարենցը տեսնում էր մեղսագործ երկիրն իր սփի, ցավի ու արյան մեջ: Տրտում երկրում նա վսեմ էր համարում այն կապի գոյությունը, որ մարդուն ուներ Աստծո մետու... Զարենցի երազանքը մեկն է՝ գտնել այդ ոսկեօծ կապի սկիզբը... Զար ու դժմակ ժամանակներում փոքրացել ու մանրացել էր մարդկային երգի ու աղոթքի ճանապարհը... Աշխարիի ճորտերը մնում էին ստրուկ ու խեղճ... Զարենցի հոգին փոթորկվում էր, ճահճուտ էր համատարած, և դառնաթախիծ խորերի մեջ բանատեղծը ապավիճում էր լոկ մեկին ու միակիմ՝ Երկնավորին»,- գոյում է Արփենիկ Զարենցը: Բանատեղծն իր ստեղծագործություններում շարունակում է հաստատել Գրիգոր Լուսավորչի, Ներսես Շնորհալու, Հովհաննես Սարկավագի արտահայտած այն մեծ ու ճշմարտացի գաղափարը, որ Աստված Սեր է ու Սիրո արտահայտություն: Հոգով ու մարմնով անաղարտ մնալու, աստվածաշնչյան պատվիրանները նվիրածորեն կատարելու պատգամները բանաստեղծը արտահայտել է հստակորեն, և ինքը էլ եթե շեղվել է ինչ-որ մի տեղ, ապա հաջորդել է մեղանչելու, ապաշխարելու աղոթքը:

Այդ խորհուրդները ոչ միայն արտահայտվեցին նրա ստեղծագործություններում, այլև իր ապրած հոգեւոր ու ֆիզիկական կյանքը եղավ այդպիսին՝ «Թողող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի»: «Համայնական դաշտերի սերմնացանները» ստեղծագործության մեջ, ինչպես Հ. Հովհաննիսյանը «Հատիկը» գործում, անհուն գորովաճքով է հատիկը հողին հանձնող նրա սերմնացանը դիմում Բարձրյալին: Նա իր գործը սկսում է չերմեռանդ աղոթքով՝ «Օրինայլ է Աստված, բարձրյալ է Աստված», «Փառք շատ, Տեր: Հորովե՛լ, հորովե՛լ... Հո՛, եզր ջամ...»:

Հողի մշակ՝ Աստծուն ուղղված խոսքի մեջ ինչպիսի՞ հավատ ու սեր: Աշխատավոր մարդու հոգեւրանության մեջ Երկնավորի բարեգությունը, կամեցողությունը շատ կարևոր հանգամանք է հանապազօրյա հաց վաստակելու ճանապարհին, որը ևս միշտ է աղոթքի:

Զարենցի նվիրայլ դուստրը մեկիկ-մեկիկ բացում է մեծ բանատեղծի հոգու գաղտնարանները: Իր սրտի ցավը ու մորմորը, կյանքի հարուցած դառնությունները Երկնավորին պատմելով, միաժամանակ նա չի դժգոհում իր դաժան ճակատագրից ու ընծայված բախտից: Ինչպես բանաստեղծն ինքն է գրում.

*O, ոչ, Դու չես լսել երբեք տրտումքը իմ,
Ոչ հոգմության, ոչ չար հերյուրանքի համար,
Թեկուզ իշել եմ ծանր, օրհասակած ամպեր,
Իմ ուսերին խոնջացած և անտերունչ շնչին:
«Իմ լեռան աղոթքը»*

Այս, վիթխարի են ընդամենը 40 տարի ապրած պոետի բանատեղծական պատգամները և թողած գրական ժառանգությունը: Նրա երգերը մողական ուժ ունեն իրենց մեջ: Ինչպիսի ջերմություն ու հոգեմարագատություն կան «Գագել մոր համար», «Տաղ անձնական», «Հայրենիքում» լիրիկական, «Դամթեական առասպել»,

«Մահվան տեսիլ», «Գանգրահեր տղան», «Սումա» և էպիկական շնչի մյուս գործերում: Գրողի աստվածապատումները առկա են նաև «Երկիր Նախրի», «Երևանի ուղղիչ տնից» արձակ գործերում: Ինչպիսի՞ գործեր կելանեին նրա տաղանդաշռայլ զլրչից, եթե անարդարության ու նախանձի թուզը չքայլավեին նրա միտքն ու մարմինը, եթե կույր ձևացած անատվածները կարողանային տեսնել Աստծո ընտրյալին: Աստված նրան դրել էր հանճարների ճանապարհին, և առ խորապես զգում էր իր ստեղծածի արժեքն ու մեծությունը:

Ամեն անգամ, երբ նորից ու նորից աղոթքների նման ընթերցում ենք «Լուսամփոփի պես աղջիկ», «Ինչ տրտում են զանգերը», «Կապուտի մեջ», «Ես էլ մի օր կանցնեմ ամդարձ» և նրությամբ ու ջերմ զգացումներով շաղախված մյուս գործերը, Չարենցը մեզ պատկերանում է վանքում խաչքարերի ու Աստվածամոր պատկերի առջև: Ու հավերժուեն էլ նրա ստեղծագործությունները դարձան հոգու մրմունչ-աղոթքներ:

... Ու զանգերը դողանջում են, կարկաչում, հնչում,
 Փախցնում են աստղերի չուն ու կանչո՞ւմ, կանչու՞մ:
 Խաչը վանքի, երգը զանցի կապուտում վերջին,
 - Չարթի՛ն, զարթի՛ն, կապուտ աղջիկ ու նայիր խաչին...
 Նա ուկի է երկիճը մնանած, մի կտոր ուկի,
 Նա մի երազ. ուկի միրած արթմացած խոսքի...

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ